ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2025թ. **N ------ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000

-	**Հարկային եկամուտների հաշվառման և գանձման բաժին**				
3	բաժնի պետ	1	408,000		408,000
4	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
5	առաջատար մասնագետ	3	282,200		846,600
6	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
-	**Ոչ հարկային եկամուտների հաշվառման և գանձման բաժին**				
7	բաժնի պետ	1	408,000		408,000
8	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
9	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
10	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**20.0**			**6,834,000**

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «788», «263,475,845» թվերը փոխարինել համապատասխանաբար «790», «264,597,845» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2334», «696,939,245» թվերը փոխարինել «2336», «698,061,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Վերջին երեք տարիների ընթացքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Եկամուտների հաշվառման և գանձման վարչության աշխատանքային բեռնվածությունը նշանակալիորեն աճել է:

Ներկայումս վարչության պետը կրում է չափազանց լայն շրջանակի պարտականություններ, բազմաբնույթ և բարդ գործառույթներ, որոնք պահանջում են հատուկ մասնագիտական մոտեցում և անընդհատ վերահսկողություն: Երկու տեղակալի նշանակումը թույլ կտա իրականացնել աշխատանքների ճիշտ մասնագիտական տեղաբաշխում հետևյալ ուղղությունների միջև.

- Տեղակալ հարկային հաշվառման, գանձման և տուգանքների հավաքագրման ուղղությամբ,
- Տեղակալ հաշվետվությունների, վերլուծության և ներքին վերահսկողության ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալը և աշխատանքային գործընթացների ճիշտ մասնագիտական տեղաբաշխման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Եկամուտների հաշվառման և գանձման վարչությունում ավելացնել վարչության պետի տեղակալի 2 (երկու) նոր հաստիք՝ ապահովելու մասնագիտացված կառավարումն ու արդյունավետ աշխատանքային բաշխումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ